ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ՝, ՎԱՂԻ ՈՐԴՈՒ

Աղեքսանդրը թագավորեց մեկ տարի և 22 օր, Լևոնի որդի Կոստանգնի հետ։ Նա մարգ ուղարկեց և Դալակրենոն [վանքից] բերել տվեց Նիկողայոսին, նախապես պատրիարքությունից հեռացնելով Եվթիմիոսին և երկրորդ անգամ այդ Նիկողայոսին[88] պատրիարքական աթոռին նստեցրեց։ Աղեքսանդրը Մագնավրայի՝ [պալատում] ժողով գումարեց, Ագաթոսի [վանքից] Եվթիմիոսին բերել տվեց և Նիկողայոսի հետ ժողովին մասնակցելով, Եվթիմիոսին կարգալույծ արեցին։ Կարծես վայրի գազաններ լինեին, նրանք անմիջապես խուժեցին սրբազան այրի վրա և փետեցին նրա արգո մորուքը, վզից բռնած քաշքշեցին և անտանելի այլ պատիժների ենթարկեցին, անվանելով իգամոլ, շնացող, ուրիշի կնոջ հետ հարաբերված։ Բայց այդ սուրբ ու արգո այրը ամեն ինչ տարավ հեզ ու հանգիստ։ Նրան աքսորեցին Ագաթոսի [վանքը], ուր և նա վախճանվելով, թաղվեց քաղաքում[89], իր վանքում։ Պատրիարք [Նիկողայոսի] այն կղերականը, որ [Եվթիմիոսի] Մագնավրայում աքսորի դատապարտվելու առթիվ փետել էր նրա ալեհեր մազերը, երբ տուն վերադարձավ, հենց այդ նույն պահին այն անտեսանելի պատճառով հրդեհվեց։ Բացի այդ, նա իր դստեր գտավ կաթվածահար, ձեռքերն ու լեղուն կապ ընկած, և այդպես անկողնին գամված նա ապրեց մինչև Նիկեփոր Հաղթող[90] կայսեր ժամանակները, օրվա հացը մուրալով։

2. Աղեքսանդրը, որ անցյալում էլ իր եղբայր Լևոնի կողմից արհամարհված լինելու պատճառով կայսեր վայել ոչինչ չէր անում, փափկակենցաղ էր և իրեն որսորդության տված, սիրում էր խնջույքներն ու լպիրշությունը, միահեծան իշխելով, արի ու երևելի ոչինչ չարեց։ Դառնալով մենիշխան, նա քահանա Հովհաննեսին (մականունը՝ Լազանես) ռեքտոր[91] դարձրեց։ Նա Աղեքսանդրի մահից հետո դժնդակ կերպով մահկանացուն կնքեց Հեբդոմոնում՝ գնդակ խաղալիս։ [3] Աղեքսանդրը, բացի այդ, Գաբրիելոպուլոսին և սկլավինիացի[92] Վասիլիցեսին հսկայական հարստություն տվեց, ողողեց նրանց արքունիքի դրամներով։ Պատմում են, որ Աղեքսանդրը բազմիցս ցանկացել է այդ Վասիլիցեսին կայսր հռչակել, իսկ Լևոնի որդի Կոստանդնին՝ ներքինացնել։ Սակայն այդ ծրագրի իրականացմանը խանգարեցին Լևոնի մտերիմ մարդիկ, որոնք մեկ պատճառաբանում էին, թե Կոստանդինը դեռ փոքր է ներքինացվելու համար, մեկ, թե նա հիվանդ է։ Աղեքսանդրի օրոք արևմուտքում գիսավոր աստղ երևաց. նրան քսիֆիաս

են կոչում և մարդիկ ասացին, թե այն՝ քաղաքում տեղի ունենալիք արյունահեղության մասին էր կանխագուշակում։

Այս Աղեքսանդրը ընկերացավ խաբեբա ու կախարդ մարդկանց, որոնք իրեն համոզեցին, թե ձիարշավարանում գտնվող վարազի պղնձե արձանը իր նշանն է, քանզի մարտնչում է իր եղբայր առյուծի[93] [Լևոնի] դեմ։ Այդպիսով, նրանք այդ հիմարին հասկացրին, թե խոլին վայել կյանք է վարում։ Դրանից նա խաբված, խոզի արձանի սեռական օրգաններն ու ատամները վերականգնեց, քանզի պակասում էին։ Նման խարեությամբ տարված նա ձիարշավական մրցումներ կազմակերպեց, այդ առթիվ եկեղեցիների սուրբ ծածկոցներն ու ջահերը վերցնելով, ձիարշավարանը զարդարեց, աստծուն արժան պատիվը թշվառականը կուռքերին մատուցեց։ Դրա համար էլ ահա նա շատ չանցած աստծուց դիրքից զրկվեց։

5. Երբ հագարացիներից պարտություն կրած լոգոթետ Հեմերիոսը վերադարձավ քաղաք, Աղեքսանդրը նրան պալատի Կամպա կոչվող վանքում արգելափակեց, սպառնաց նրան, քանզի նա իր եղբայր Լևոնի թագավորության ժամանակ իր նկատմամբ թշնամաբար էր վարվել։ Կալանքի ենթարկվածը վեց ամիս անց վշտից դժնդակ կերպով վախճանվեց։

6. Բուլղարների իշխան Սիմեոնը խաղաղություն խնդրելով Աղեքսանդրի մոտ դեսպաններ ուղարկեց և հայտնեց, թե խաղաղության կողմնակից է, խնդրեց բարեհամբույր վերաբերմունք ու պատիվ[94], ինչպես Լևոն կայսեր օրոք։ Աղեքսանդրը անմտությամբ ու հիմարաբար խայտառակ կերպով դեսպաններին ճամփեց, Սիմեոնի հասցեին սպառնալիքներ ուղղեց, կարծելով, որ կսարսափեցնի նրան, որով խաղաղությունը վերացավ, և Սիմեոնը մտադիր էր քրիստոնյաներին պատերազմ հայտարարել։

7. Աղեքսանդրը՝ ճաշած ու հարբած, կեսօրվա շոգին գնաց գնդակ[95] խաղալու։ Այնտեղ իր վրա հասավ աստծո ուղարկած պատուհասը։ Նրա քթից ու սեռական օրգաններից առատ արյուն հոսեց, և գալով արքունիք, երկու օր հետո՝ ինդիկտիոնի առաջին տարվա հունիս ամսի 6-ին, կիրակի օր վախճանվեց, թագավորությունն ընձեռելով Լևոնի որդի Կոստանդնին[96], իսկ խնամակալությունը՝ Նիկողայոս պատրիարքին, Ստեփանոս մագիստրոսին, Հովհաննես Էլլադաս մագիստրոսին[97], Հովհաննես ռեքտորին, Եվթիմիոսին, Վասիլիցեսին և Գաբրիելոպուլոսին։ Աղեքսանդրի մարմինն ամփոփեցին կայսրերի գերեզմանոցում՝ իր հայր Վասիլի [շիրիմում]։